կայ որոշ տարբերություն. հայ պատերազմության պնդումի վրա թուրքերը գիջեցին Համամլու—Աշտարակ խճուղին, որով մոտ 1000 քառ. կիլոմետր տարածություն աւելացուեց հայերին թողնուած հողերի վրա:

Հայ-թուրքական սահմանը որոշուում էր հետեւեալ կերպով. «Դեւեղիրեան լեռների գագաթներով անցնելով՝ սահմանագիծը փոխում է իր ուղղությունը դէպի հարաւ՝ անցնելով Աղրիքար, Բաշքերան, Նուռռահման լեռների գագաթներով: Նուռռահման գագաթից յետոյ շարունակում է հարաւային ուղղությամբ և անցնելով շարունակ գագաթների գծով՝ հանդիպում է Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղուն Աղբուլաղ աւանից հինգ կիլոմետր դէպի արեւմուտք: Այստեղից գալիս է գագաթների գծով մինչ Խանալի աւանը, որտեղից գրեթէ ուղիղ գծով հասնում է մինչև Ալագեոզի ամենաբարձր գագաթը և հետեւելով, դարձեալ ուղիղ գծով, կտրում է Էջմիածին-Սարդարապատ խճուղին Էջմիածնից 7 կիլոմետր դէպի արեւմուտք գտնուող կէտում: Յետոյ, պտոյտ է անում այդ քաղաքի շուրջը 7 կիլոմետր տարածության վրա, շարունակում է զուգահեռական ուղղությամբ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղու գծին մոտ վեց կիլոմետր տարածության վրա այդ երկաթուղուց և 16 կիլոմետր դէպի հարաւ-արեւմուտք Բաշքեարան աւանից՝ կտրում է այդ աւանից դէպի երկաթուղու գիծը գնացող ճանապարհը: Յետոյ, շրջում է դէպի հարաւ-արեւելք, անցնում է Աշաղի-Կարաբաղլար գիւղից մի կիլոմետր դէպի արեւմուտք Շաղաբլու, Ղարախաչ, Աշաղի-Զանախչի աւաններով և հասնում է մինչև Էլփինչայը, որով շարունակում է մինչև Արփա աւանը: Այս վերջին աւանից խառնուում է Արփաչայի հովտի հետ, հասնում է մինչև Կայալու աւանը և հետեւելով Կայիդ գետի ընթացքին՝ հասնում է մինչև Աղտարան լերան գագաթը. յետոյ անցնում է Ղարատարնա, Ալաջին, Ղարանլիկ լեռների գագաթներով, հասնում է մինչև Ռիլիանչայի իջնելը, հետեւում է նրա հովտին, մինչև որ հասնում է Ագա աւանից դէպի Հարաւ՝ ռուս-պարսկական նախկին սահմանագծի վրա գտնուող Ալիջին աւանը»:

Չորրորդ յոդուածով «Օսմ. կայսերական կառավարությունը պարտաւորուում էր զէնքի ուժով օգնություն հասցնել Հայաստանի Հանրապետության կառավարության այն դէպքում, երբ վերջինս կը խնդրէր նրան այդ մասին՝ երկրում կարգը և անդորրությունը ապահովելու համար»:

Վեցերորդ յոդուածը տնօրինում էր Հայաստանում ապրող մահմետականների կրօնական և սովորոյթի խնդիրները. սուլթանի անունը պէտք է յիշուէր մահմետականների հասարակական աղօթքների մէջ:

Եօթներորդ յոդուածը վերաբերուում էր հիւպատոսական և առևտրական համաձայնությունների կնքման:

Ութերորդ յոդուածում խօսուում էր երկաթուղային, իններորդում՝ պոստ-հեռագրական, իսկ տասներորդում՝ մի երկրի սահմանամերձ բնակիչների միւս երկիրն անցնելու իրաւունքների մասին:

Յօդուած 11րդով «Հայկական Հանրապետության կառավարությունը պարտաւորուում էր գործ դնել իր բոլոր ջանքերը, որպէսզի սոյն պայմանները ստորագրելուց անմիջապէս յետոյ հեռացնի Բագու քաղաքից այնտեղ գտնուող հայկական ուժերը և ապահովէ, որ այդ հեռացումը ո՛չ մի ընդհարման տեղիք չտայ»: